



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ ԸԻԴ 0207/05/14թ.

Վարչական գործ ԸԻԴ 0207/05/14թ.

Նախագահող դատավոր՝ Հ.Խաչատրյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Լ.Ավանեսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

2-ին դեկտեմբերի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Ա.Հայրապետյանի
Վ.Հովսեփյանի
Ի.Կարապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի <<Բրուտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի, <<ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի և <<Արցախ կաթ>> փակ բաժնետիրական ընկերության՝ վարչական ակտերն ու առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2015թ. սեպտեմբերի 11-ի որոշման դեմ պատասխանողներ ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի և <<Արցախ կաթ>> փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

<<Բրուտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետ՝ <<Բրուտ>> ՍՊԸ կամ Հայցվոր/ դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի /վարչական/ դատարան /այսուհետ՝ Վարչական դատարան/ ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ կառավարությանն առընթեր <<Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի /այսուհետ՝ Կադաստրի մարմին/ և <<Արցախ կաթ>> փակ բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ <<Արցախ կաթ>> ՓԲԸ/, խնդրելով անվավեր ճանաչել Ստեփանակերտի քաղաքապետի 2014թ. մարտի 25-ի թիվ 364 Ա որոշումը, դրա հիման վրա 2014թ. մարտի 28-ին կնքված հողամասի առուվաճառքի թիվ 39 պայմանագիրը և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-12 մատյանի թիվ 159110 համարի տակ 2014թ. մարտի 31-ին կատարված սեփականության իրավունքի գրանցումը:

Վարչական դատարանի 2014թ. օգոստոսի 20-ի վճռով հայցը մերժվել է:

<<Բրուտ>> ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2014թ. նոյեմբերի 21-ի որոշմամբ Վարչական դատարանի 2014թ. օգոստոսի 20-ի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Գործի նոր քննության արդյունքում Վարչական դատարանի 2015թ. հունիսի 3-ի վճռով հայցը բավարարվել է:

Ստեփանակերտի քաղաքապետարանի և <<Արցախ կաթ>> ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2015թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժվել են. Վարչական դատարանի հունիսի 3-ի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալ Ա.Հակոբյանը և <<Արցախ կաթ>> ՓԲԸ-ի փոխտնօրեն Ե.Մանգասարյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան է ներկայացրել <<Բրուտ>> ՍՊԸ-ն:

Գերագույն դատարանի 2015թ. հոկտեմբերի 29-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ և նշանակվել դատաքննության:

2.Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

ա/ Ստեփանակերտի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով:

Ըստ բողոքաբերի՝ դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

1. Ստեփանակերտի քաղաքապետի որոշումը՝ վիճարկվող հողամասն «Արցախ կաթ» ՓԲԸ-ին օտարելու մասին, օրինաչափ է և համապատասխանում է ԼՂՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և մասնավորեցման մասին ԼՂՀ կառավարության որոշման պահանջներին:

2. ԼՂՀ հողային օրենսգրքի 51-րդ և 72-րդ հոդվածների ուժով Հայցվորը վիճարկվող հողամասի նկատմամբ որևէ իրավունքով չի օժտված, իսկ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 65-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի ուժով Հայցվորի իրավունքները չեն խախտվել:

Բողոքաբերը գտնելով, որ գործով Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ համանման գործերով օրենքի միատեսակ կիրառության համար, խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2015թ. սեպտեմբերի 11-ի որոշումը:

բ/ «Արցախ կաթ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքի հիմքերը և հիմնավորումները.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել և չեն կիրառվել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի առաջին կետի պահանջները, սխալ են մեկնաբանվել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 22-24-րդ, 46-րդ հոդվածների, «Պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման/ մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 10-րդ հոդվածների, ԼՂՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները: Ստորադաս դատարանը ճիշտ չի պարզել և գնահատել գործի համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

Շարադրելով վկայակոչված նորմերի իրավական բովանդակությունը՝ բողոքաբերը նշել է, որ ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 24-ի թիվ 61 որոշմամբ, ուղղակի անհատույց տրամադրման ձևով, մասնավորեցվել է «Ստեփանակերտի կաթի կոմբինատ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը՝ բաժնետոմսերի 100 տոկոսը սեփականության իրավունքով փոխանցելով «Արվարդ» փակ բաժնետիրական ընկերությանը /այսուհետ՝ «Արվարդ» ՓԲԸ կամ Ընկերություն/: Ինչպես նշված որոշմամբ, այնպես էլ 1999թ. սեպտեմբերի 6-ի թիվ 2 հանձնման-ընդունման ակտով, ԼՂՀ տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների նախարարության ու Ընկերության միջև 1999թ. հոկտեմբերի 12-ին ստորագրված թիվ 07 ԱՏ պայմանագրով, Ընկերության 2002/2003թթ. հիմնական միջոցների տեղեկագիր գրքի 6-րդ համարի տակ՝ «1.926.972 դրամ արժողությամբ կաթսայատուն» գրառմամբ, Ադրբեջանական ԽՍՀ նախագծային ինստիտուտի կողմից կազմված՝ վիճահարույց կաթսայատան, սպասարկման հողատարածքի և օժանդակ շինությունների նախագծերի փաթեթի գրքով, Ընկերության նախկին և ներկայիս աշխատողներ Բենիկ Միմոնյանի, Վալերի Դարյանի և այլոց ցուցմունքներով ու Ստեփանակերտի քաղաքապետի 2005թ. հունվարի 24-ի թիվ 31

որոշմամբ հաստատված է, որ վիճելի կաթսայատունը սեփականության իրավունքով փոխանցվել է Ընկերությանը, իսկ հետագայում՝ նրա իրավահաջորդներին:

Բողոքաբերի կարծիքով, վեճի առարկա կաթսայատունը, գտնվելով Ընկերության վարչական շենքի դիմաց գտնվող ճանապարհի հակառակ կողմում, թյուրիմացության պատճառով, Ընկերությունն իրավահաջորդության կարգով տարբեր իրավաբանական անձանց անցնելու գործընթացում, նրա նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն չի գրանցվել:

Ըստ բողոքաբերի՝ վերոնշյալ ապացույցների և տվյալների առկայության դեպքում, Վերաքննիչ դատարանն անհիմն եզրակացրել է, որ կաթսայատուն անվանումով շինության վերաբերյալ տվյալ նշված է միայն 1999թ. սեպտեմբերի 6-ին կազմված թիվ 2 ակտում, սակայն հավաստիանալ, թե նշվածը վերաբերվում է ստույգ քննարկվող վարչական գործով վեճի առարկա հանդիսացող կաթսայատանը, հնարավոր չէ՝ համապատասխան ապացույցների բացակայության պատճառով:

Նույն հիմքերով Վերաքննիչ դատարանն անհիմն եզրակացրել է, որ գործի նյութերում բացակայում է որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ վիճելի կաթսայատունը սեփականության իրավունքով պատկանել է պատասխանող ընկերությանը՝ ներառյալ նրա իրավահաջորդներին: Այդ առումով Վերաքննիչ դատարանն անտեսել է Հայցվորի և Ընկերության միջև 2003 և 2006թթ. կնքված վեճի առարկա կաթսայատան անհատույց օգտագործման պայմանագրերը, որոնց դրույթներն անմիջականորեն հաստատում են, որ կաթսայատունն <<անտեր>> չի եղել, այլ գտնվել է Ընկերության օգտագործման և տիրապետման ներքո:

Բողոքաբերը սխալ է համարում նաև Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ <<...2013թ. փետրվարի 21-ից հետո պատասխանող ընկերության կողմից նոր իրավահաստատող փաստաթղթերը վերաբերվում են միայն հողատարածքին, իսկ ջրավազանի, պահեստի և շվաքարանի վերաբերյալ որևէ նշում առկա չէ>>, քանի որ յուրաքանչյուր կաթսայատան կառուցման և շահագործման դեպքում, օրենքով սահմանված կարգով, նախատեսվում է կաթսայատան սպասարկման և շահագործման համար անհրաժեշտ հողատարածքի հատկացում, որտեղ կառուցվում են կաթսայատան սպասարկման և շահագործման համար անհրաժեշտ օժանդակ շինություններ:

Բողոքաբերը գտնելով, որ առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի առերևույթ էական խախտում, խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել բողոքարկվող վարչական գործով Վերաքննիչ դատարանի 2015թ. սեպտեմբերի 11-ի որոշումը և հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքների պատասխանը.

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշվել է, որ վճռաբեկ բողոքներն անհիմն են, չեն համապատասխանում գործում առկա հանգամանքներին և ենթակա են մերժման այն հիմնավորմամբ, որ պատասխանող կողմը չի կարողացել ներկայացնել որևէ ապացույց վիճելի հողամասը և դրա վրա առկա շինությունները սեփականության իրավունքով <<Արցախ կաթ>> ՓԲԸ-ին պատկանելու մասին:

Վճռաբեկ բողոքների պատասխանում խնդրվում է Ստեփանակերտի քաղաքապետարանի և «Արցախ կաթ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքները մերժել:

4. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 24-ի թիվ 61 որոշմամբ «Ստեփանակերտի կաթի կոմբինատ» պետական փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը մասնավորեցման հիմունքներով, ուղղակի անհատույց ձևով, սեփականության իրավունքով փոխանցվել է Գնորդին՝ «Արվարդ» փակ բաժնետիրական ընկերությանը /հ. 1, թ. 62, «Արցախ կաթ» ՓԲԸ-ի կադաստրային գործ, թ. 28-29/:

2. «Ստեփանակերտի կաթի կոմբինատ» պետական և «Արվարդ» փակ բաժնետիրական ընկերությունների ու ԼՂՀ կառավարության կողմից ստեղծված հանձնաժողովի 1999թ. սեպտեմբերի 6-ի հանձնման-ընդունման թիվ 2 ակտով «Ստեփանակերտի կաթի կոմբինատ» ՊԲԸ-ին պատկանող գույքն ու կառուցվածքային միավորումները, այդ թվում նաև կաթսայատան շենքը՝ 1.926.972 /մեկ միլիոն ինը հարյուր քսանվեց հազար ինը հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ արժողությամբ, սեփականության իրավունքով փոխանցվել են Ընկերությանը /հ. 1, թ. 63/:

3. 2001թ. դեկտեմբերի 10-ին Ընկերությանը տրված սեփականության իրավունքի թիվ 0000099 վկայականում կաթսայատունը չի նշված /հ. 1, թ. 152-163/:

4. Վեճի առարկա կաթսայատունը գտնվում է «Արցախ կաթ» ՓԲԸ-ի վարչական շենքի դիմացի ճանապարհի հակառակ կողմում, նախկին «Մսի կոմբինատ» պետական ձեռնարկության և «Պետրոլ սերվիս» ՓԲԸ-ի վարչական շենքերի տարածքների արանքում և Ստեփանակերտի քաղաքապետի 2014թ. մարտի 25-ի թիվ 364 Ա որոշմամբ նրա հասցեն համարվում է «Թումանյան 119» /հ. 1, թ. 58/:

5. Կաթսայատունը՝ 1.926.972 ՀՀ դրամ արժողությամբ, գրանցված է «Արվարդ» ՓԲԸ-ի 2002/2003թթ. հիմնական միջոցների տեղեկագիր գրքի 6-րդ համարի տակ:

6. Ընկերության և «Բրուտ» անհատական ձեռնարկության՝ ի դեմս նրա նախագահ Սերգեյ Բալայանի միջև երկու անգամ՝ 2003թ. նոյեմբերի 1-ին և 2006թ. հոկտեմբերի 1-ին կնքվել են վեճի առարկա կաթսայատան անհատույց օգտագործման պայմանագրեր /բրուտագործության զարգացման համար/, որոնցից նկատելի է, որ Ս.Բալայանը /2006թ. պայմանագրի վերջում նշված է Բալայան-Ավագյան ազգանունը/ իմացել է, որ կաթսայատունը պատկանում է Ընկերությանը և նախկինում օգտագործվում էր շոքի /գոլորշի/ արտադրելու համար: Պայմանագրերով նախատեսվում էր, որ «նոր սեփականատիրոջն են անցնում պայմանագրով նախատեսված Փոխատուի իրավունքները, իսկ գույքը մնում է ծանրաբեռնված Փոխատուի իրավունքներով» /հ. 1, թ. 17-21, 26-30/:

7. Ստեփանակերտի քաղաքապետի 2005թ. հունվարի 24-ի թիվ 31 որոշմամբ բավարարվել է Ընկերության խնդրանքը և հաստատվել է Թումանյան փողոցի

շրջակայքում, ըստ կցվող ուրվագծի, Ընկերությանը պատկանող արտադրամասի 2000,0 քառ.մ մակերեսով տարածքի սահմանները /հ.1, թ. 65/:

8. Ընկերության կողմից, նրա կառավարիչ Ն.Աղաբալյանին 2005թ. հոկտեմբերի 10-ին տրված լիազորագրում, որպես Ընկերության գույք, նշված է նաև Թումանյան փողոցի 100 հասցեով գտնվող բրուտազործության արհեստանոցը /«Արվարդ» ՓԲԸ-ի և «Արցախ կաթ» ՓԲԸ-ի կադաստրային գործ, թ. 86/:

9. Համաձայն 2008թ. մարտի 21-ին կնքված առուվաճառքի պայմանագրի՝ «Արվարդ» ՓԲԸ-ն իր բաժնետոմսերի 100 տոկոսը վաճառել է Կիպրոսի Հանրապետության Նիկոսիա քաղաքի «Կոնսուլեյա Լիմիթիդ» Ընկերությանը, իսկ վերջինս՝ «Կալոյո Լիմիտեդ» Ընկերությանը /հ. 1, թ. 93-95/:

10. Ընկերությունը 2008թ. հունիսի 23-ին վերանվանվել է «Արցախ կաթ» ՓԲԸ-ի, որը 2008թ. հունիսի 23-ին գրանցվել է ԼՂՀ Կադաստրի մարմնում /գրանցման համարը՝ 443.120.21040, վկայականը՝ 02 Ա թիվ 002052/:

11. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի /այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան/ 2013թ. մարտի 13-ի որոշմամբ ըստ «Արցախ կաթ» ՓԲԸ հայցի ընդդեմ «Բրուտ» ՍՊԸ-ի՝ «Արվարդ» ՓԲ և «Բրուտ» ՍՊ ընկերությունների միջև 2006թ. հոկտեմբերի 1-ին կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագիրն անվավեր ճանաչելու և «Արցախ կաթ» ՓԲԸ-ին պատկանող կաթսայատան շենքից «Բրուտ» ՍՊԸ-ին վտարելու մասին թիվ 2001/02/2012թ. քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև թիվ 0248/02/2013թ. քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը:

12. ԸԻԴ 0248/02/2013թ. քաղաքացիական գործով Առաջին աստիճանի դատարանի 2013թ. հուլիսի 19-ի որոշմամբ Ստեփանակերտ քաղաքի Թումանյան փողոցի նախկին «Սսի կոմբինատ»-ի /Թումանյան 117/ և ներկայիս «Պետրոլ սերվիս» ՓԲԸ-ի /Թումանյան 119/ վարչական տարածքների արանքում տեղակայված կաթսայատան շենքի և հարակից տարածքի նկատմամբ սեփականության իրավունքով տիրապետման փաստը հաստատելու պահանջի մասին «Արցախ կաթ» ՓԲԸ-ի դիմումը թողնվել է առանց քննության:

13. Հայցվորի դիմումները՝ կաթսայատան շենքը և նրա հարակից տարածքը «Բրուտ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով տրամադրելու մասին, Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԼՂՀ կառավարության կողմից չեն բավարարվել /հ. 1, թ. 51-56/:

14. Ստեփանակերտի քաղաքապետի 2014թ. մարտի 25-ի 364 Ա որոշմամբ Ստեփանակերտ քաղաքի փողոց Թումանյան 119 հասցեում գտնվող կաթսայատան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 2230,88 քառ.մ. մակերեսով հողամասը կադաստրային արժեքի չափով, ուղղակի վաճառքի կարգով օտարվել է «Արցախ կաթ» ՓԲԸ-ին /հ. 1, թ. 58/:

15. Կադաստրի մարմնի կողմից 2014թ. մարտի 31-ին, պետական գրանցման միասնական 3-12 մատյանի թիվ 159110 համարի տակ կատարվել է պետական գրանցում՝ Ստեփանակերտ քաղաքի Թումանյան փողոցի թիվ 119 հասցեում կաթսայատունը սեփականության իրավունքով «Արցախ կաթ» ՓԲԸ-ին պատկանելու

մասին: Գրանցման համար հիմք են հանդիսացել ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 24-ի թիվ 61 որոշումը, 1999թ. սեպտեմբերի 6-ի հանձնման-ընդունման թիվ 2 ակտը, Ստեփանակերտի քաղաքապետի 2014թ. մարտի 25-ի թիվ 364 Ա որոշումը և հողամասի առուվաճառքի 2014թ. մարտի 28-ի թիվ 39 պայմանագիրը /հ. 1, թ. 57/:

16. <<Արցախ կաթ>> ՓԲԸ-ի կողմից Վարչական դատարանին ներկայացրած նախկին Ադրբեջանական ԽՍՀ նախագծային ինստիտուտի կողմից կազմված նախագծային փաթեթն անմիջական տվյալներ է պարունակում սույն գործով վեճի առարկա կաթսայատունը ԼՂԻՄ կաթի կոմբինատին պատկանելու մասին: /հ. 2, թ. 91-126/:

17. <<Ստեփանակերտի կաթի կոմբինատ>> պետական ձեռնարկության նախկին և ներկայիս աշխատողներ Բենիկ Սիմոնյանի, Վալերի Դարյանի, Վալերի Սիմոնյանի և այլոց ցուցմունքներով հաստատված է, որ կոմբինատի ստեղծման պահից վեճի առարկա կաթսայատունը գտնվել է կոմբինատի և նրա իրավահաջորդների հաշվեկշռում և երբեք չի հանվել հաշվեկշռից, թեև ձեռնարկության սեփականատերերը մի քանի անգամ փոխվել են:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով *Ստեփանակերտի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը* նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանը Ստեփանակերտի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն եզրահանգումները, որ Առաջին ատյանի դատարանի ԸԻԴ 0248/02/2013թ. գործով օրինական ուժի մեջ մտած 2013թ. հուլիսի 19-ի վճով /պետք է նշվեր՝ դիմումն առանց քննության թողնելու որոշմամբ/ հաստատված է, որ վիճարկվող վարչական ակտերի ընդունմամբ խախտվել են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով ամրագրված՝ Հայցվորի իրավունքները, որ քաղաքապետարանը գործով իր կողմից ընդունված վիճարկվող որոշման իրավաչափության հարցի վերաբերյալ Վարչական դատարանին որևէ ապացույց չի ներկայացրել, և որ <<Ստեփանակերտի քաղաքապետի և Կադաստրի մարմնի կողմից սեփականության իրավունքով անշարժ գույքի փոխանցման և պետական գրանցման իրավաչափության հարցերում հիմնավորված եզրահանգում անելու համար թույլատրելի ապացույց կարող են համարվել Ստեփանակերտի քաղաքային համայնքի և <<Արցախ կաթ>> ՓԲԸ-ի՝ ներառյալ նրա իրավանախորդների, սեփականության և կամ այլ գույքային իրավունքի առկայությունը հիմնավորող բոլոր իրավաստեղծ փաստաթղթերը, որպիսիք գործից բացակայում են>>:

Գերագույն դատարանը չառարկելով, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտերը շոշափում են նաև Հայցվորի շահերը, միաժամանակ չի համաձայնվում Վերաքննիչ դատարանի վերը նշված մյուս պատճառաբանություններին, ելնելով հետևյալից:

Այսպես, Առաջին ատյանի դատարանը, քննելով ըստ դիմումի <<Արցախ կաթ>> ՓԲԸ-ի՝ սեփականության իրավունքով տիրապետման փաստը հաստատելու մասին

քաղաքացիական գործը, 2013թ. հուլիսի 19-ի որոշմամբ դիմումը թողել է առանց քննության՝ դիմումատուի և շահագրգիռ անձ Ս.Ավագյանի միջև իրավունքի մասին վեճ ծագելու հիմնավորմամբ:

Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Ս.Ավագյանը համապատասխան միջոցներ է ձեռնարկել՝ իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար: Այդ կապակցությամբ նրա դիմումները՝ վեճի առարկա կաթսայատան շենքը և նրա հարակից տարածքը սեփականության իրավունքով իրեն տրամադրելու մասին, Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԼՂՀ կառավարության կողմից չեն բավարարվել այն պատճառաբանությամբ, որ այն պատկանում է «Արցախ կաթ» ՓԲԸ-ին, իսկ Ս.Ավագյանի կողմից այդ մարմինների գործողությունները դատական կարգով չեն բողոքարկվել, այսինքն, նա համաձայնվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԼՂՀ կառավարության այն գրավոր պատասխանների հետ, որոնց համաձայն՝ վեճի առարկա կաթսայատունը դեռևս 1999թ. սեփականության իրավունքով փոխանցվել է «Արվարդ» ՓԲԸ-ին:

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Ստեփանակերտի քաղաքապետը սույն գործով իր կողմից ընդունված վիճարկվող որոշման իրավաչափությունը չի կարողացել ապացուցել, չի բխում գործի նյութերից և հերքվում են բողոքում բերված փաստարկներով:

Այսպես, ԼՂՀ հողային օրենսգրքի 51-րդ հոդվածը սահմանում է հողամասերի նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը, որոնցից մեկն էլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները և նրանց հետ կնքված պայմանագրերն են:

ԼՂՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերի օտարումն իրականացնում են համայնքների վարչական սահմաններում՝ համայնքների ղեկավարները /Ստեփանակերտ քաղաքում՝ Ստեփանակերտի քաղաքապետը/:

ԼՂՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝ իրավաբանական անձանց և քաղաքացիներին կամ նրանց իրավահաջորդներին մասնավորեցված ձեռնարկությունների ու ... շինությունների պահպանման և սպասարկման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափերով:

Ստեփանակերտի քաղաքապետի 2014թ. մարտի 25-ի թիվ 364 Ա որոշումից և դրա հիման վրա կնքված հողամասի առուվաճառքի թիվ 39 առ 28.03.2014թ. պայմանագրից նկատելի է, որ դրանք բխում են ԼՂՀ հողային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի նորմերի դրույթներից և ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 24-ի՝ մասնավորեցման մասին թիվ 61 որոշման պահանջներից, ուստի Ստեփանակերտի քաղաքապետի կողմից ընդունված վիճարկվող ակտերի անվավեր ճանաչելու հիմքերը գործով բացակայում են:

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ կաթսայատանը սպասարկող հողամասի և հարակից շինության նկատմամբ իրավունքի փոխանցման գործընթացը պետք է կարգավորվեր ԼՂՀ հողային և քաղաքացիական օրենսգրքերի դրույթների շրջանակներում՝ հաշվի առնելով նաև առերևույթ ձեռքբերման նախապատվություն ունեցող անձի շահերը, ոչնչով հիմնավորված չէ և ինչպես նշված է վճռաբեկ բողոքում, վիճարկվող հողամասի նկատմամբ Հայցվորը, ձեռքբերման վաղեմության իրավունքի խնդրանքով, երբևէ քաղաքապետին կամ դատարան չի դիմել: Իսկ հաշվի առնելով, որ վեճի առարկա գույքը Հայցվորն օգտագործել է Ընկերության թույլտվությամբ, ապա նախապատվության իրավունքով հողամասը ձեռք բերելու մասին նրա պնդումները հիմնազուրկ են:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Կադաստրի մարմնի կողմից կատարված պետական գրանցումն իրավաչափ համարվել չի կարող՝ Պատասխանող կողմին գույքային իրավունք տրամադրելու լիազորությամբ օժտված չլինելու հիմնավորմամբ, Գերագույն դատարանը նշում է, որ այդ կապակցությամբ Կադաստրի մարմնի ներկայացուցիչը Վարչական դատարանի դատական նիստում համոզիչ պարզաբանել է, որ պետական գրանցումը կատարել են քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստաթղթերի և չափագրման հատակագծերի հիման վրա, որի պայմաններում կաթսայատան չափագրման հետ միասին, որպես օժանդակ տարածք չափագրել են նաև ջրավազանը, շվաքարանը և պահեստը՝ գրանցելով որպես անշարժ գույքի միավոր: Հետևաբար, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-12 մատյանի 159110 համարի տակ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, որի համար հիմք են հանդիսացել ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 24-ի թիվ 61 որոշումը, 1999թ. սեպտեմբերի 6-ի թիվ 2 ակտը, Ստեփանակերտի քաղաքապետի 2014թ. մարտի 25-ի թիվ 364 Ա որոշումը և հողամասի առուվաճառքի 2014թ. մարտի 28-ի թիվ 39 պայմանագիրը, Գերագույն դատարանը համարում է օրինաչափ և հիմնավորված:

Հետևաբար, սույն վեճը կարգավորող իրավական նորմերի վերլուծությունը և գործով ձեռք բերված ապացույցները վկայում են, որ վիճարկվող վարչական ակտերով Հայցվորի իրավունքները չեն կարող համարվել խախտված, քանի որ նա նշված տարածքում գտնվում է <<վարձակալի>> կարգավիճակում՝ Ընկերության թույլտվությամբ:

Գերագույն դատարանը <<Արցախի կաթ>> ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը նույնպես գտնում է հիմնավոր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պարզաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1/ գնահատում է ապացույցները,

2/ որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել,

3/ որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը,

4/ որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Գործի նյութերով հիմնավորված է, որ ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 24-ի թիվ 61 որոշմամբ, Հադրութի շրջանի Տոդ գյուղում գտնվող պանրի արտադրամասն առանձնացնելուց հետո, <<Ստեփանակերտի կաթի կոմբինատ>> ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի 100 տոկոսը մասնավորեցման կարգով, ուղղակի անհատույց ձևով, սեփականության իրավունքով փոխանցվել է <<Արվարդ>> ՓԲԸ-ին: Այդ առումով երկու ընկերությունների և ԼՂՀ կառավարության կողմից ստեղծված հանձնաժողովի 1999թ. սեպտեմբերի 6-ի հանձնման-ընդունման թիվ 2 ակտով <<Ստեփանակերտի կաթի կոմբինատ>> ՊՓԲԸ-ին պատկանող գույքն ու կառուցվածքային միավորները, այդ թվում վեճի առարկա կաթսայատունը՝ 1.926.972 ՀՀ դրամ արժողությամբ սեփականության իրավունքով փաստացի հանձնվել են Ընկերությանը: Չնայած 2001թ. դեկտեմբերի 10-ին տրված անշարժ գույքի պետական գրանցման սեփականության իրավունքի թիվ 0000099 վկայականում կաթսայատունը չի նշվել, բայց Ընկերությունը դրանից չի հրաժարվել՝ համարելով այն որպես սեփականության իրավունքով իրեն հանձնված գույք: Այդ է վկայում կաթսայատան տվյալների գրանցումը Ընկերության 2002/2003թթ. հիմնական միջոցների տեղեկագրում և Ընկերության ու Հայցվորի միջև երկու անգամ՝ 2003 և 2006թթ. կնքված՝ Թումանյան 100 հասցեում գտնվող կաթսայատան անհատույց օգտագործման /բրուտագործության և քանդակագործության զարգացման նպատակով/ պայմանագրերը և, չնայած այդ գործարքներն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չեն ստացել՝ հանգեցնելով դրանց անվավերության, սակայն գործարքներից նկատելի է, որ դրանց կնքման պահին կողմերը վեճի առարկա կաթսայատունը համարել են որպես Ընկերության սեփական գույք: Այդ է վկայում նաև, որ Ընկերության կառավարիչ Ն.Աղաբալյանին 2005թ. հոկտեմբերի 30-ին տրված լիազորագրում, Ընկերությանը պատկանող գույքի թվում նշված է նաև Թումանյան 100 հասցեում գտնվող <<բրուտագործության աշխատանոցը>>, այսինքն՝ վեճի առարկա կաթսայատունը:

Այն հանգամանքը, որ Ընկերությունը կաթսայատան մասնավորեցման գործընթացից չի հրաժարվել, հաստատվում է նաև Ստեփանակերտի քաղաքապետի 2005թ. հունվարի 24-ի թիվ 31 որոշմամբ, որից նկատելի է, որ քաղաքապետարանը բավարարել է Ընկերության խնդրանքը և հաստատել Թումանյան փողոցի շրջակայքում, ըստ կցվող ուրվագծի, Ընկերությանը պատկանող արտադրամասի 2000,0 քառ.մ. մակերեսով տարածքի սահմանները: Ուրվագիծը նշված է որոշման հակառակ էջին, որից դժվար չէ նկատել, որ այն վերաբերում է Թումանյան 100 հասցեում /ներկայիս Թումանյան 119/ գտնվող վեճի առարկա կաթսայատանը, սպասարկման համար հողատարածքին և օժանդակ շինություններին: Նույն որոշմամբ սահմանվել է, որ Ընկերության հողօգտագործման իրավունքը ծագում է քաղաքապետարանի հետ հողատարածքի վարձակալության պայմանագրի կնքումից հետո:

Վարչական դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ վիճարկվող վարչական ակտերով խախտվել են վեճի առարկա կաթսայատան ձեռքբերման վաղեմության իրավունքով Հայցվորի նախապատվության իրավունքը: Ըստ Վարչական դատարանի, Ստեփանակերտի քաղաքապետարանը խախտել է Օրենսգրքի 65-րդ և 68-րդ հոդվածները, ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 12-րդ կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 62-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջները: Բացի այդ, Վարչական դատարանը ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 24-ի թիվ 61 որոշումը և «Ստեփանակերտի կաթի կոմբինատ» ՊՓԲԸ-ի մասնավորեցման մասին ու դրանից բխող 1999թ. սեպտեմբերի 6-ի հանձնման-ընդունման թիվ 2 ակտը ճանաչելով սույն գործի համար ոչ վերաբերելի ու անթույլատրելի ապացույցներ և դուրս գալով հայցի շրջանակներից, վեճի առարկա կաթսայատունը համարել է տիրագուրկ՝ գտնելով, որ Հայցվորը 10 տարուց ավել բարեխղճորեն տիրապետում է այն:

Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Վարչական դատարանի եզրահանգումներին, «Արցախ կաթ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «գործի նյութերում բացակայում է որևէ վերաբերելի ապացույց այն մասին, որ վեճի առարկա կաթսայատունը սեփականության իրավունքով պատկանել է Ընկերությանը՝ ներառյալ նրա իրավանախորդներին», իսկ բողոքաբերի կողմից Վարչական դատարան ներկայացված փաստաթղթերը, Վերաքննիչ դատարանը վերաբերելի ապացույցներ չի համարել, քանի որ դրանց «Վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ տրվել է գնահատական»:

Մինչդեռ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների նշված եզրահանգումներն օրինական և հիմնավորված չեն, սխալ են պատճառաբանված, քանի որ չեն բխում գործով հետազոտված և իրենց հաստատումը գտած ապացույցներից: Նման պայմաններում ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ հենց ինքը՝ Հայցվորը, հայցադիմումում նշել է, որ ԼՂՀ կառավարության համապատասխան ակտերով վեճի առարկա կաթսայատունը հանձնվել է Ընկերությանը, որի հետ ինքը երկու անգամ՝ 2003 և 2006թթ. պայմանագիր է կնքել՝ կաթսայատան անհատույց օգտագործման մասին: Հայցվորը, ինչպես հայցադիմումում, այնպես էլ սույն գործով Գերագույն դատարանի դատական նիստում հայտարարել է, որ կաթսայատան

մասնավորեցման կապակցությամբ 2006թ. դիմել է Կադաստրի մարմնին, սակայն մերժվել է իր խնդրանքը՝ գույքն Ընկերությանը պատկանելու պատճառաբանությամբ:

Դեռ ավելին, ստորադաս դատարաններն անտեսել են նաև այն հանգամանքը և իրենց որոշումներում որևէ կերպ չեն անդրադարձել որպես վկա հարցաքննված, <<Ստեփանակերտի կաթի կոմբինատ>> և <<Արցախ կաթ>> ընկերությունների նախկին և ներկայիս աշխատողներ Բենիկ Սիմոնյանի, Վալերի Շահնազարյանի և այլոց /յոթ վկա/ ցուցմունքներին և վերջիններիս աշխատանքային գրքույկների քաղվածքներին, որոնցով հաստատվում են նրանց՝ վեճի առարկա կաթսայատանը աշխատելու և այն <<Ստեփանակերտի կաթի կոմբինատ>>-ի հաշվեկշռում գտնվելու փաստը: Այդ այն դեպքում, երբ Օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասն առաջին հերթին ապացույցների թվին դասում է վկայի ցուցմունքը:

Գերագույն դատարանը չի վիճարկում, որ մինչև անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը <<Արցախ կաթ>> ՓԲԸ-ն չի ունեցել սեփականության իրավունքներ սահմանող փաստաթուղթ, սակայն փաստում է, որ վեճի առարկա կաթսայատունը ԼՂՀ կառավարության վարչական ակտերի ուժով գտնվել է պատասխանող կողմի և նրա իրավանախորդների օրինական օգտագործման և տիրապետման ներքո, որից էլ ածանցված է եղել գույքի նկատմամբ Հայցվորի բոլոր գործողությունների կատարումը, քանի որ դրանք իրականացվել են ոչ թե ինքնուրույն, այլ պատասխանող կողմի և նրա իրավանախորդների համաձայնությամբ: Այդ առումով Հայցվորի կողմից կաթսայատան օգտագործումն ու տիրապետումն օրինական համարվել չեն կարող, որոնց հիմքում թեկուզ դրված էր կողմերի միջև կնքված պայմանագիրը, սակայն <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ԼՂՀ օրենքի՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չի պահպանվել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Գերագույն դատարանի լիազորությունը, հետևյալ հիմնավորմամբ:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի

դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Պատասխանողներ՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի և «Արցախ կաթ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը և այն փոփոխել. «Բրուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի, «ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և «Արցախ կաթ» փակ բաժնետիրական ընկերության՝ վարչական ակտերն ու առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. «Բրուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հոգուտ Ստեփանակերտի քաղաքապետարանի և «Արցախ կաթ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ /յուրաքանչյուրին 30.000-ական ՀՀ դրամ/, որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ _____ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ _____ Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

_____ Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ